ՀՈՐԻՆՎԱԾ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄ «ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՔՍԵՐՔՍԵՍԻ» ԱՆՎԱՄԲ

Ռ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արտաշեսյան արքաների կողմից թողարկված դրամների թվագրման, վերադրման, թողարկման վայրերը ճշգրտելու, դրանց շրջանառությունն ուսումնասիրելու ընդավառներում դեռ շատ դժվարին խնդիրներ կան լուծելու: Այս դժվարությունների մի զգալի մասը կապված է հայկական դրամների և դրամական գանձերի հայտնաբերման մասին ճշգրիտ տվյալների, դրանք, չնչին բացառություններով, հուսալի հնագիտական կոնտեքստի հետ կապելու հնարավորության բացակայության հետ: Գանձերը հաճախ կտրված են լինում ոչ միայն հնագիտական, այլև՝ դրամագիտական կոնտեքստից. դրանք կա՛մ խաթարված են, կա՛մ ընտրանի են, կա՛մ կազմում են կասկածելի միացություններ: Դրանով իսկ այդ գանձերը զրկվում են դրամագիտության համար առաջնակարգ սկզբնաղբյուրային նշանակությունից: Այս վիճակն ավելի է խճողվում ժամանակ առ ժամանակ կեղծ և հորինված դրամների ի հայտ դալով, ինչպիսիք են Զարեհի պղնձե հորինվածքը[1], Տիգրան Մեծի ոսկե, արծաթե և բրոնզե կեղծ դրամներն ու հորինվածքները[2] և այլն:

Լ. Սարյանը, որը բազմաթիվ հետաքրքիր հոդվածների ու հրապարակումների հեղինակ է, «Պատմա-բանասիրական հանդեսի» 1998թ. երրորդ համարում մեզ ներկայացնում է Նյու Յորքի անձնական հավաքածուներից մեկում պահվող արծաթե մի դրամ, որի վավերականությունը, սակայն, լուրջ կասկածներ է հարուցում[3]:

Փորձենք ցույց տալ, թե որոնք են դրանք: Թեև ես չեմ տեսել և շոշափել դրամը, բայց Լ. Սարյանի ինձ ուղարկած բարձրորակ լուսանկարները, հոդվածում տրված նկարագրությունների հետ միասին, թույլ են տալիս գրեթե սպառիչ պատկերացում կազմել դրամի մասին: Իրոք, դրամի կշիռը

---

1 P. Z. Bedoukian. Coinage of the Artaxiads of Armenia. London, 1978, p. 46, pl. I, 1; V. Matiossian. Who was Zariadres? Some Notes on an Artaxiad Coin. – Armenian Numismatic Journal, 1995, 21, p. 17–19; Y. T. Nercessian. Armenian Coins and Their Values. Los Angeles, 1995, p. 54.

2 Y. T. Nercessian. Op. cit., p. 178-182; P. Z. Bedoukian. Op. cit., pl. l, 16 and 27, pl. 2,42; C. Foss. The Coinage of Tigranes the Great: Problems, Suggestions and a New Find. – Numismatic Chronicle, 1986, 146, p. 24–25, note 20.

3 *Տե՛ս Լ.Ա. Սարյանի «Արտաշես III-ին վերադրվող նոր արծաթե դրամ» հոդվածը՝ «Պատմա- բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1998, N 3, էջ 155–162:*

համապատասխանում է հելլենիստական դրախմայի կամ հռոմեական դենարի կշռին, իսկ մետաղաձուլական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ մետաղը, հավանաբար, հին է: Հեղինակը, սակայն, իրավացիորեն նշում է նաև, որ հատաձույլն արտաշեսյան դրամների համար (ես կավելացնեի նաև՝ այդ ժամանակի այլ դրախմաների և դենարների համար) ունի անսովոր մեծ տրամագիծ (22մմ) և անսովոր բարակություն: Այդ շեղումները հնարավոր են, եթե դրամը վերահատված է: Իսկ հին դրամագործության մեջ վերահատումը բավական տարածված էր: Մենք վստահում ենք դրամը հատված (այլ ոչ թե ձուլված) լինելու մասին Լ. Սարյանի դիտարկումներին, բայց կեղծ դրամ կարելի է հատել ոչ միայն այսօրվա մետաղից պատրաստված հատաձույլի վրա, այլև դրա համար օգտագործելով համապատասխան կշռի որևէ սովորական թողարկման հին դրամ: Այնուամենայնիվ, վերահատման հանգամանքն ինքնին կասկածի հիմք լինել չէր կարող, եթե այն չհամալրվեր դրամի վավերականությունը ժխտող այլ փաստերով:

Անդրադառնանք դրամի պատկերագրական առանձնահատկություններին: Եթե դրամը լիներ իսկական, ապա այն կարող էր լավ պահպանվածների շարքին դասվել: Դրամի վրա օգտագործումից առաջացած բնական մաշվածության կամ միջավայրի անբարենպաստ պայմանների հետևանքով առաջացած քայքայվածության հետքեր չեն երևում: Մինչդեռ Ակողմում դափնեպսակի ձախ հատվածի, արքայի դեմքի, խույրի մանրամասների, թիկնոցի, իսկ Բկողմում զինյալի դեմքի, նիզակի և դրության ...ΑΞΕΡΞ... հատվածում առկա է մաշվածության տպավորություն ու աղոտություն: Ուշադիր զննելու դեպքում, սակայն, կարելի է նկատել, որ հատկապես արքայի դեմքի (ինչպես նաև Բկողմում զինյալի դեմքի) մանրամասնությունների բացակայությունը ոչ թե մաշվածության, քայքայման կամ մեխանիկական վնասման հետևանք է, այլ պարզապես կնիքի անավարտ փորագրման[4]: Տվյալ դեպքում արքայի և զինյալի դեմքերի պատկերման անավարտությունը, խույրի և այլ պատկերագրական տարրերի աղոտությունն ու անորոշությունը թողնում են միտումնավորության տպավորություն և հետապնդում են, հավանաբար, դրամի իսկության մասին ավելորդ կասկածներ չհարուցելու նպատակ:

Այդ անորոշությանը հակադրվում է հստակորեն ընթերցվող դրության ոճական կատարելությունը: Եթե այս դրամը լիներ վավերական, ապա հռոմեական դրամական պատկերագրությանը բնորոշ իր մի քանի ա-

4 Բ կողմում, զինյալից ձախ, նկատելի է դաշտի մակերեսի խորացում, որը, հավանաբար, լրացուցիչ մշակման հետևանք է:

ռանձնահատկություններով (դափնեպսակե շրջանակ, հոծ գծով արված կանոնավոր շրջան, շրջանաձև գրություն) այն պետք է իրոք թվագրվեր ոչ վաղ, քան մ.թ.ա. I դարի վերջը: Սակայն հռոմեական արևելքում թողարկվող դրամների հունարեն դրությունների տառաձևերը այդ ժամանակաշրջանում զգալի փոփոխություններ էին կրել[5]*: Մինչդեռ այս դրամի դրության մեջ մենք տեսնում ենք հելլենիստական ժամանակաշրջանի դասական տառաձևերը՝ մասնավորապես Σ, E, և Ω տառերի, որոնք եթե ոչ ժամանակավրեպ են, ապա չափազանց հազվադեպ կարելի է հանդիպել այդ ժամանակի դրամների վրա: Անբնական է նաև գրության կատարյալ շրջանաձևությունը և տառերի արտակարգ համաչափությունը:*

Դրամի վրա կարդում ենք արքայի անունը ΑΡΤΑΞΕΡΞΕΩ գրությամբ: Արտաշեսյան դրամների վրա գրության այս արխաիկ ձևը մինչև այժմ հայտնի էր Արտավազդ II-ի հրաշալի պահպանվածության երեք տետրադրախմաներից (ΑΡΤΑΥΑΣΔΕΩ)[6]*, ի տարբերություն դրախմաների, որոնց վրա արքայի անունը գրված է սովորական ձևով՝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ*[7]*: Ինչ վերաբերում է Արտաշես III Զենոնին, ապա նրա թագադրման առիթով թողարկված հռոմեական դրամների վրա պարզ ընթերցվում է արքայի ա-*

---

5 Р. Е. Варданян. К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи.- Историко-филологический журнал, 1987, N 2, с.198-200.

6 *Խ. Ա. Մուշեղյան. Արտավազդ II-ի չորեքդրամյանը.- ՊԲՀ, 1964, 2,317-323;* Y. T. Nercessian. Armenian Coins..., pl. 45, 4a, 4b: *Սեռական հոլովում ΕΩ վերջավորությունն ունեն ատտիկյան բարբառի արական և իգական սեռի II հոլովի քիչ թվով դոյականներ, տե՛ս* С. И. Соболевский. Древне-греческий язык. М., 1948, с. 37; А. Ч. Козаржевский. Учебник древнегреческого языка, М., 1975, с. 30-31. *Պետք է շնորհակալությամբ նշեմ նաև այն կարևոր տեղեկության մասին, որ ստացա պրոֆ. Սիմոն Կրկյաշարյանից. ատտիկյան II հոլովի կիրառությունը հիմնականում հասնում է մինչև մ.թ.ա. IV դարի վերջերը, երբ սկսում է աստիճանաբար ձևավորվել համահունական լեզուն՝ կոյնեն: Ի. Դվորեցկու Հին հունարեն-ռուսերեն բառարանում* (И. Дворецкий. Древнегреческо-русский словарь, под. ред. С. И. Соболевского. М., 1985) *ամփոփված են ընդամենը շուրջ քառասուն անձնանուններ, որոնք Հոմերոսի և մ.թ.ա. V-IV դդ. հեղինակների մոտ (Հերոդոտոս, Քսենոփոն, Պինդարոս, Էսքիլես, Թուկիդիդես, Պլատոն, Արիստոֆանես և այլն) հանդիպում են սեռականի ΕΩ վերջավորությամբ, մինչդեռ մ.թ.ա. I դարի և ավելի ուշ հեղինակների մոտ (Դիոդորոս, Պլուտարքոս, Լուկիանոս և այլն) այդ նույն անձնանունները սեռականում ունեն ΟΥ վերջավորությունը: Հայաստանի և նրա բոլոր հարևան ու հեռավոր պետությունների դրամների վրա (սելևկյան, բակտրիական, պարթևական, կապադովկյան, պոնտական և այլն) արքաների անունները գրված են սեռական հոլովի ΟΥ վերջավորությամբ: Այս կապակցությամբ Արտավազդ II-ի տետրադրախմաներն, իհարկե, խնդիր են հարուցում, որն ավելի մանրակրկիտ լեզվաժամանակագրական ուսումնասիրության նյութ է:*

7 *Ի դեպ, ինչպես Փարաքարի օրինակի, այնպես էլ Ե. Ներսեսյանի դրքում ներկայացված երկու տետրադրախմաների վրա* (Y. T. Nercessian. Op. cit. pl. 45, 4a, 4) *արքայի անվան մեջ յոթերորդ տառը պարզորեն ընթերցվում է Σ (սիգմա), այլ ոչ թե Z (զետա), ինչպես այն հիշատակված է Խ. Մուշեղյանի (Արտավազդ II-ի չորեքդրամյանը, էջ 318, 320, 323 և Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.). Երևան, 1983, էջ 55), Զ. Պտուկյանի (op. cit., p. 69) և Ե. Ներսեսյանի (op. cit., p. 75) մոտ:*

նունը՝ ΑΡΤΑΞΙΑΣ[8], որը լիովին համընկնում է հունարեն դրավոր աղբյուրներում հանդիպող ձևերին՝ Ἀρταξίας[9]:

Արտավազդ II-ի տետրադրախմաներից ընդօրինակված է նաև արքայի ΘΕΙΟΥ տիտղոսը՝ ածականային ձևով ներկայացված: Խ. Մուշեղյանը բավական մանրամասնորեն անդրադարձել է այս ձևի եզակիության խնդրին, նշելով, որ հելլենիստական աշխարհում թողարկված դրամների վրա մեզ հայտնի բոլոր այլ դեպքերում այս տիտղոսաձևը հանդես է գալիս որպես դոյական՝ ΘΕΟΥ[10]:

Արքայի դիմապատկերն իր հորինվածքով, պատկերադրական մանրամասնություններով ընդհանուր առմամբ նմանվում է Արտավազդ II-ի տետրադրախմաների պատկերատիպին[11] և հանդիսանում Տիգրան V-ի դիմապատկերի դրեթե պատճենը: Արտաշատի 1981թ. պեղումներից հայտնաբերված Տիգրան V-ի շատ լավ պահպանված բրոնզե մի դրամի վրա ամենայն պարզությամբ երևում են բոլոր մանրամասնությունները՝ ի տարբերություն մինչ այժմ հրատարակված նույնատիպ մի քանի դրամների (տե՛ս նկ.)[12]: Պետք է ենթադրել, որ հենց այսպիսի, լավ պահպանված մի դրամ ընդօրինակման նմուշ է ծառայել նյուլորքյան այս հորինված դրամի համար:

Արքայի դիմապատկերը երիզող դափնեպսակը թեև կարող է համարվել հռոմեական կամ ենթահռոմեական դրամական պատկերագրության ոչ հազվադեպ հանդիպող տարրերից մեկը, սակայն ո՛չ նախորդ հայկական արքաների, ո՛չ էլ մ.թ.ա. I – մ.թ. I դդ. այլ դրամների Ակողմում դափնեպսակե շրջանակ չէր պատկերվում:

---

8 P. Z. B e d o u k i a n. Op. cit., p. 77, no. 168.

9 Ἀρταξίας ձևը հանդիպում է Դիոդորոսի (XXXI. 22, 27a - Արտաշես I), Ստրաբոնի (XLIV. 5,6,15 -Արտաշես I), Հովսեպոս Փլավիոսի (XVII. 104 - Արտաշես II) մոտ: Կա նաև Ἀρταξης ձևը, որը մեկ անգամ հանդիպում է Դիոդորոսի մոտ (XXXI. 17 - Արտաշես I), իսկ Դիոն Կասիոսի մոտ այն միակ ձևն է (XLIX. 39,6, 44,4, LI. 16,2 - Արտաշես II, LVI. 9,4 - Արտաշես III): Ἀρταξερξης անվանաձևը հայ արքաների համար անտիկ հեղինակների մոտ չի հանդիպում, սակայն այն վկայված է 1985թ. Արտաշատի պեղումներից հայտնաբերված բրոնզե մի դրամի դրությամբ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΞΕΡΞ. տե՛ս Մ. Զ ա ր դ ա ր յ ա ն. Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից. Արտաշես Բ, Դրամաշրջանառությունը Հայաստանում (զեկ. թեզիսներ), Երևան, 1998, էջ 5-6:

10 Խ.Ա. Մ ու շ ե ղ յ ա ն. Արտավազդ II-ի չորեքդրամյանը, էջ 320-321:

11 Նույն տեղում, տե՛ս նաև Y. T. N e r c e s s i a n. Op. cit., pl. 45, 4a, 4b.

12 Ակողմ – Տիգրանի դիմապատկերը աջ. շրջանաձև դրություն՝ ΒΑΧΙΛΕΥΧ ΜΕΓΑΧ ΝΕΟΧ ΤΙΓΡΑΝΗΧ, Բկողմ - Օգոստոսի դիմապատկերը ձախ. շրջանաձև գրություն ΚΑΙΧΑΡ ΘΕΟΧ.
ΘΕΟΥ ΥΙΟΧ [ΧΕΒΑΧΤΟΧ]: Բրոնզ, կշիռը՝ 15.04գ, տրամ.՝ 26,2 մմ, կնիքների հարաբերությունը՝ 12: Հայտնաբերման վայրը՝ VIII բլուր, քառ. 21N: Արտաշատի արշավախմբի ղեկավար Ժ. Խաչատրյանը սիրով ընդառաջեց մինչ այժմ չհրատարակված այս դրամը ներկայացնելու խնդրանքիս, որի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը:

Ինչ վերաբերում է զինյալի պատկերագրությանը, ապա ելնելով հանդերձանքից (սաղավարտ, նիզակ, վահան), կարելի է ենթադրել, թե այստեղ պատկերված է Աթենասը (ինչպես փակագծերում նշված է Լ. Սարյանի մոտ): Իրականում, սակայն, սա Աթենասի (գոտկատեղից վեր) և Նիկեի (գոտկատեղից ցած) պատկերագրական տարրերի էկլեկտիկ միակցում է: Հունա-հռոմեական պատկերագրությանը բնորոշ էր որոշակի ազատությունը և բազմազանությունը, բայց կային չափանիշներ և ավանդույթներ, որոնք պահպանվում էին նույնիսկ արևելքում: Կանգնած Աթենասը դրամների վրա սովորաբար պատկերվում էր անշարժ կամ ոտքերի աննշան շարժում արտահայտող կեցվածքով, մինչդեռ Նիկեն ներկայացվում էր կանգնած, քայլելիս կամ սլացիկ շարժման մեջ՝ ոտքերի ծայրերը հագիվ դետնին դիպչող, երկար խիտոնի ծածանվող քղանցքներով, ինչպիսին տեսնում ենք Արտաշատի քաղաքային վավերական բրոնզե դրամների[13] և Արտաշես III-ին վերագրվող այս դրամի վրա:

Վերը ներկայացված դիտարկումների և վերլուծության հիման վրա քննության առարկա դրամը կարելի է գրեթե վստահորեն հորինված համարել: Ասում եմ գրեթե, որովհետև եթե հնագիտական պեղումների ընթացքում կամ արժանահավատ դրամագիտական կոնտեքստում (գանձ) հայտնաբերվի անվիճելիորեն վավերական նմանատիպ դրամ (կամ դրամներ), ապա հարկ կլինի զարմանալ ժամանակի օրինաչափություններին չենթարկվելու մեր նախնիների ունակության վրա[14]: Իսկ այժմ եզրակացությունս հետևյալն է[15]. դրամը հորինված է բավարար վարպետությամբ, թեև որոշակի բանիմացությամբ, բայց ոչ համոզիչ լինելու աստիճանի: Ակողմում Տիգրան V-ի պղնձե դրամների արքայական դիմապատկերի ըն-

---

13 *Տե՛ս, օրինակ,* Б.Н. А р а к е л я н. *Артаваст I. Ереван, 1982, տխտ. 78-ի մեծացված լուսանկարը:*

14 *Բոլորովին վերջերս տեղեկացա (որի համար պարտական եմ կոլեգային՝ Արմինե Զոհրաբյանին) Թեհրանի «Ալիք» օրաթերթում հրատարակված մի հաղորդագրության մասին («Արտաշես երկրորդի արծաթե դրամը», 21 ապրիլի 1998, էջ 7), ուր խոսվում է գնդապետ Անդրե Ռոնդի հավաքածոյում պահվող ևս մեկ այսպիսի դրամի մասին, որը նա ձեռք է բերել Լիբանանում որպես զինվորական կցորդ ծառայելիս: Դրամը հրատարակել է հենց ինքը՝ Ա. Ռոնդը, Փարիզում լույս տեսնող* Bulletin de la Société Française de Numismatique *-ի 1997թ. փետրվարյան համարում, որին ծանոթանալու հնարավորությունը դեռևս չեմ ունեցել: Գուցե առաջիկայում հարկ լինի կրկին անդրադառնալ այս հարցին, թեև չեմ կարծում, թե Լիբանանում գտված դրամը կարող է էականորեն ազդել այստեղ շարադրված փաստարկների և դրանցից բխող եզրակացության վրա:*

15 *Նույնիսկ չենք փորձի խորանալ պատմական բնույթի խորհրդածությունների մեջ, ցույց տալու համար Արտաշես III-ի կողմից նման դրամի թողարկման անհավանականությունը, քանի որ դրամն ինքնին ապացուցում է այդ: Նկատենք միայն, որ Գերմանիկոսի կողմից, ասել է թե՝ Հռոմի կողմից թագադրված արքային, որի իշխանությունն անցել է խաղաղությամբ և որը մահացել է իր բնական մահով, չգիտես թե ինչու վերագրվել է հենց ΑΡΤΑΞΕΡΞΕΩ ΘΕΙΟΥ գրության բացառիկ ձևը, որն ակնհայտորեն ակնարկում է (քանի որ այլ դեպք հայտնի չէ) Արտավազդ II-ին՝ հռոմեացիների կողմից դավաճան համարվող հայոց արքային:*

դրինակությունն է բոլոր պատկերագրական մանրամասնություններով և Հռոմի կայսերական ժամանակաշրջանի գրամների Բկողմում հանդիպող գափնեպսակե շրջանակով ամփոփված: Բկողմի պատկերատիպն, ընդհանուր առմամբ, Արտաշատի քաղաքային բրոնզե դրամների ընդօրինակությունն է (զինյալը՝ գոտկատեղից ցած, գրության շրջանաձևությունը, մենագիրը, դաշտում զետեղված տարեթվի առկայությունը), Արտավազդ II-ի տետրադրախմաներից վերցված արտասովոր դրության տարրերով (արքայի անվան սեռական հոլովի ΕΩ վերջավորությունը, ΘΕΙΟΥ ածականական ձևը) և Աթենասի պատկերադրությանը բնորոշ ատրիբուտների անհմուտ հավելումով հարստացված:

ФАЛЬШИВАЯ СЕРЕБРЯНАЯ МОНЕТА С ИМЕНЕМ “БОЖЕСТВЕННОГО АРТАКСЕРКСА”

Р. Е. ВАРДАНЯН

Резюме

Л. Сарян недавно опубликовал серебряную монету (Историко-филологический журнал, 1998, N 3, с. 155–162), которую он рассматривает как подлинную и приписывает Арташесу III (18–34 н. э.). Анализ иконографических, стилистических и технических особенностей монеты показывает, однако, что она фальшивая. Типы ее лицевой и оборотной сторон эклектичным образом сконструированы из различных деталей арташесидских монет. Портрет царя является подражанием портрету Тиграна V. Тип оборотной стороны составлен из иконографических деталей бронзовой городской монеты Арташата, обогащенных встречаемыми только в легендах тетрадрахм Артавазда II характерными подробностями.